ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1466 26.09.2014թվ.

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍՄ
ՄՏՄՈ 3798
29 03 2014 թ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՄՈ 7574
29 08 2014թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

26.08.2014թ-ի թիվ 2621/1450 գրությամբ Դիտորդական խումբը խնդրել էր հայտնել, թե Աշոտ Հարությունի Այդինյանը 05.04.2014թ-ին ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Իջևանի ՁՊՎ ընդունվելիս և մինչ ՔԿՀ տեղափոխվելը ունեցել է մարմնական վնասվածքներ թե ոչ, 03.09.2014թ-ին թիվ 2/2-1-2136 գրությամբ տրվել էր մեկնաբանություն, որ ձերբակալված Ա. Այդինյանը ՁՊՎ ընդունվելիս իր առողջական վիճակի վերաբերյալ գանգատներ չի ունեցել, վերջինիս մոտ մարմնական վնասվածքներ չեն արձանագրվել, որոնց վերաբերյալ կատարվել են համապատասխան գրանցում <<ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում:

Նշվածի վերաբերյալ Դիտորդական խումբը 11.09.2014թ-ին թիվ 2621/1458 գրությամբ դիմել էր ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչության պետ, ոստիկանության գեներալ-մայոր պարոն Վ. Օսիկյանին, խնդրելով տալ տեղեկություն թե Ա. Այդինյանը ինչ մարմնական վնասվածքներով է ընդունվել ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ և ինչ միջոցներ է ձեռնարկվել:

Ի պատասխան 18.09.2014թ-ին թիվ Ե40/4-2784 գրությամբ տրվել է մեկնաբանություն, որ Աշոտ Հարությունի Այդինյանը ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ է ընդունվել 18.04.2014թ-ին, ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ-ից, որի մարմնական զննության ժամանակ, արձանագրվել էր ձախ արմնկահոդի շրջանում, ձախ ծնկահոդի և ոտքի սրունքի առաջնային 1/3 ական հատվածում, քերծվածքներ: Մարմնական վնասվածքների վերաբերյալ սահմանված կարգով հայտնվել է վարույթն իրականացնող մարմնին:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստը և տալ մեկնաբանություն թե Աշոտ Հարությունի Այդինյանը ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ ինչպես է ընդունվել 18.04.2014թ-ին և միաժամանակ, որտեղ է ստացել նշված մարմնական վնասվածքները:

Կից ներկայացնում ենք ՀՀ ԱՆ ՔԿՀ վարչության կողմից տրված մեկնաբանությունը:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-2824 <<04>> 11 2014թ.

Ձեր 26.09.2014թ. թիվ 2621/1466 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ՝

տիկին Հ. Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր գրությունը քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում և ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում, որտեղ կատարվել է ծառայողական քննություն:

ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն հայտնվում է, որ Ա. Այդինյանը 05.04.2014թ. ժամը 01.25-ին ձերբակալվել և տեղափոխվել է ոստիկանության Իջևանի բաժնի ՁՊՎ: Ա.Այդինյանը բանավոր հայտարարել է, որ մարմնական վնասվածքներ չունի, որի վերաբերյալ գրառում է կատարվել <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում, ինչն Ա.Այդինյանն իր ստորագրությամբ հաստատել է գանգատներ և մարմնական վնասվածքներ չունենալու հանգամանքը (կից ներկայացվում է պատճենը):

08.04.2014թ. Ա.Այդինյանը ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության ուղեկցող դասակի կողմից տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Վանաձոր>> ՔԿՀ, որտեղ զննության ժամանակ նրա ձախ արմնկահոդի շրջանում, ձախ ծնկահոդի և ոտքի սրունքի 1/3-ական հատվածներում հայտնաբերվել են քերծվածքներ, որոնց վերաբերյալ Ա.Այդինյանը հայտնել է, որ ստացել է տանը մարզվելու ժամանակ:

Ծառայողական քննությամբ պարզվել է, որ ոստիկանության Իջևանի բաժնի հերթապահ մասի պետ Ա.Սաքանյանը և ՁՊՎ ոստիկան Մ.Ջանինյանը թերացել են իրենց ծառայողական պարտականությունների կատարման մեջ, ինչով խախտվել են ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 13-րդ կետի պահանջները:

Կատարված ծառայողական քննության արդյունքներով գործառութային պարտականությունների մեջ թերացած ոստիկանության ծառայողները խիստ նախազգուշացվել են, իսկ վերը նշված խախտումների հանգամանքները քննարկվել են ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության ենթակա ստորաբաժանումների օպերատիվ խորհրդակցություններում՝ հետագայում նմանատիպ խախտումները բացառելու համար:

ՀՀ ոստիկանության շտաբ